ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 133

ք. Երևան 25.07. 2024թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-8/3» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «ՎԵՔԹՍ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 00491563, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սասունցի Դավթի 70/1շ., բն.1 (այսուհետ՝ նաև Մասնակից)): Մասնակցի կողմից ներկայացրած հայտի հավելված 1-ի առաջին կետում նշված է, որ ««ՎԵՔԹՍ» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձիք բավարարում են «ՀՀ ՊՆ-ԳՀԾՁԲ-24-8/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված պահանջներին..»: Սակայն ՀՀ պետական վերահսկողական ծառայությունից (այսուհետ՝ նաև Ծառայություն) 04.07.2024թ. ստացվել է թիվ Ե/1623-24 գրություն, համաձայն որի Ծառայությանը հասանելի տեղեկատվական շտեմարաններում առկա տեղեկատվության վերլուծությամբ պարզվել է, որ «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 01235027) 2023թ. մայիսի 23-ից մինչև 2025թ. մայիսի 23-ը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և որ «ՎԵՔԹՍ» ՍՊԸ-ի տնօրեն Դիանա Կամոյի Ադամյանի և «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ի միջև առկա է փոխկապակցվածություն, մասնավորապես՝ «ՎԵՔԹՍ» ՍՊԸ-ի տնօրեն Դիանա Կամոյի Ադամյանը հանդիսանում է նաև «Ակադա Պրինտ» ՍՊԸ-ի տնօրեն:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալի 22.07.2024թ. N 03/26-1/15366-2024 գրությունը, որոշում եմ՝ «ՎԵՔԹՍ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ